

կցութեանց միցութեանց մէջ՝ մոտաւ ըստ ընտրութեանց պատճառաւ։

Թիէրի եղական բաղդն էր տեսնել իր համբաւոյն հոկայակերպ բարձրանալը կենացը վերջին մասին մէջ։ Մի միայն ցաւ մ'ունեցաւ, այն էր որ իր փառաց այս աճումն կատարուեցաւ աղիտիք Գաղղիոյ, զոր այնշափ սիրեր էր։

Կենացն այս արևմուտքն շատ պայծառ եղաւ։ Յիրաւի մեծապէս ստգուանելի էր իրեն այն վարմունքն որով զլսաւոր գրգռիչներէն մէկն եղաւ հայրենակցացը նախանձուն և ատելութեանն ընդդէմ գերմանիոյ, բայց աղնուականութեամբ հատոյց իր այս

պարտքը ինքն եղաւ միակ Գաղղիաց ցին որ գիտցաւ ընդդիմանալ Պիզմարք իշխանին։ Թշնամոյն հայրենիքէն դուրս ելլել որչափ ալ Գաղղիոյ տնտեսական արտաքոյ կարգի կարողութեանն արգասիքն ըլլայ, սակայն եթէ կայ մէկն որուն արդինքն ըլլայ այս գործն, այն մէկն է թիէր։ Երբ փառաց ծայրն բարձրացեր էր՝ մահը վրայ կը հասնի. յետ որոյ առաջին Նախագահն եղեր էր Գաղղիական երրորդ Հասարակաբետութեան, մօտ էր նաև հասնիլ երրորդ Նախագահն ըլլալու, վասն զի առ ինքն ձգեր էր վստահութիւնն ու ակնկալութիւնը մեծի մասին Գաղղիոյ։



ՀԱՆԴԵՍ

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՑԵԼԵԱՆ

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն

29 ՕԳՈՍՏՈՒ 1877

Յետ տարեկան երկար աշխատութեան՝ հասաւ վերջապէս ուսանողաց ցանկալի ժամն և վայրկեանն, որ տեսնելով իրենց վաստակոց արդինքը պատկեալ և առաջի օտարաց և աղջայնոց՝ կը զուարձանան և կ'ուրախանան, որով մեծ ակնկալութեամբ կը քաջալերեն իրենց ծնողքը և հայրենիքը, որ կը ցանկան օր մը տեսնել զանոնք աղջին պայծառ զաւկներ և պայծառացուցիչ անձինք, թէ կրօնիք թէ կրթութեամբ և թէ ուսմամբք. այնպէս որ այս երեք տեսակ օղակներով շարք մը պսակաց հիւսելով յարուցանեն և կանգնեն երքեմն հայկական Ռդին, որ յաւերակս կ'ողբայ գեռ զրախտ Հայաստանի։ Դավրոցք և վարժարանք են յիրաւի աղջի մը ապագայ սերմն և յօյն, այն տեղ կ'երեսայ թէ ինչ պիտի ըլլայ աղջին հանդերձեալ վիճակն և բախտն և կամ գոնէ կրնայ գուշակուիլ թէ որ ուղղութեամբ կ'ընթանայ աղջի մը ողին, և ինչ տեսակ տարերօք բաղկա-

յեալ է : Այսպիսի յուսալից ապագայ մը կը խոստանայ նաև այն պատանեաց խումբն որ օտար երկնից և օտար աստեղաց նելքս կը ճդին հարուստ աւար-ներ փոխադրել իրենց սեպհական հայրենիքն , կը տեսնուին հայաբնակ ամեն գաւառներէն ժողովթալ տեսակ տեսակ ծաղկումք՝ որ պիտի սփռին և ծաղկեցու-նեն Հայաստանի տարածուն և բեղնաւոր հողը : Պէսպէս կարողով թիւնք մտաց և ձեռաց կը մրցին գերազանցելու զիրեարս , և փայլուն ապագայ մը յուսացու-նել կու տան իրենց ներկայ տհաս և չափաւոր հասակաց մէջ :

Պատանեաց թիւն կը հասնի 74 հոգւոյ , որ կը բաղկացունեն Մուրատ-Ռա-ֆայելեան Վարժարանին ընթացքը ներկայապէս , և որք իրենց ամենայն ուսմանց հանդիսացումը կատարելով հրապարակաւ ընտանի և օտար վարժապետաց առջև և քաջութեան պէսպէս տիտղոսներով պատուեալք՝ կը ներկայանան այսօր աւելի բազմագումար ակմբի մը առջև ընդունել իրենց վարձքը :

Պայծառ և գեղեցիկ օր մը սահմանուած էր հանդիսին խմբուելու Վարժա-րանին ոսկեձեղուն կամարաց ներքեւ : Առաւօտեան ժամը տամումէկին , ըստ արևմտեայց , սկսան հրաւիրեալքն երևել . և յետ կէս ժամու սկսան նախ պա-տանիք Վարժարանիմ՝ հնչեցնել գաշնակաւ գեղեցիկ երգ մը , և թնդացնել պա-լատին ձեղունքը : Ի հրաւիրելոցն արժանի յիշատակաց անձինքն էին , գաւա-ռիս իշխանապետն կոմս Սորմաննի Մորէդդի , որ իւր արժանապատիւ ազնուու-թեամբ պատուեց մեր ակումբն , և ապա Օսմանեան ընդհանուր հիւպատուն մե-ծապատիւ Միքայէլ Լիքէնտի Մաքսուտ , և իւր փոխանորդն . ապա կարգաւ կու գային ուրիշ հրաւիրեալք և ծանօթք Վարժարանին , և եսպը վարժապետաց դասն , և ապա բովանդակ մանկանց և պատանեաց խումբը :

Մասնաւոր յիշատակաց արժանի են նաև այն անձինքն 'ի Միաբանութենէս որք զանազան կերպով աշխատութիւն ունեցեր են և ունին սոյն Վարժարանիս վրայ . յորոց 'ի մասնաւորի Նախագահն բովանդակ բազմականին ' գերապատիւ Աքբեպիսկոպոս և Աքբահայր Միաբանութեանս իգնատիոս վ. կիւրեղեան , որ երկար ժամանակ տեսալութենէ վերջ 'ի սոյն Վարժարանիս՝ աստուածընտիր օծ-մամբ բարձրացաւ 'ի գահ աբբայութեան Միխիթարեան Միաբանութեան , և այսօր առաջին տեղին ունէր 'ի հանդիսի : Չմոռնանք յիշատակել նաև Վարժա-րանիս բազմավաստակ և ազնիւ Ցեսուչն վ. . չ . Գրիգոր վ. . Ճէլալեան : Հանդի-սին սկիզբն , յետ առաջին երածշուութեան՝ Պ. չ . Մինաս Նորիխիսանեան , Վար-ժարանին ուսումնական ընթացից տեսուչն երկար ատենախօսութիւն մ'ըրաւ խուլերէն լեզուով , յորում կը ճառէր հայկական մատենագրութեան և պատ-մութեան զանազան ժամանակ կրած յեղափոխութեանց վրայ , զոր գործած են յոյն , արաբացի և լատին լեզուներն . մինչև երկայն շրջանաւ կը բերէր կը հաս-ցունէր պատմութիւնն մինչև այս ժամանակս , կնքելով իր ճառն առ պատանիս Դպրոցին գովասանքով մը : Յետ ծափահարութեամբ ընդունուելու այս ճառն , նոր երածշուական գեղգեղանք սկսան հնչեցնել պատանիք 'ի զրօսանս բազմա-կանին . և յայտնապէս կը ցուցընէին իրենց ճարտար կարողութիւնն և բազմաշ-խատ ջանքն և բազում ծափահարութեամբ գովուեցան : Ապա ոմանք յառաջա-դէմ պատանեաց խօսեցան զանազան լեզուք , այս ինքն՝ հայկական , տաճկա-

կան, գաղղիական, իտալական, անդիական և գերմանական բարբառով, մանր ճառեր՝ չնորհակալութիւն ուղղելով առ հանդիսադիրս և իրենց ըրած ուսմանց ընթացքն բացատրելով։ Այս ճառից միջոց զարնուեցան երբեմն երաժշտական գործիք ալ դաշնակաւ և գեղգեղանօք՝ ինչպէս որ սովորութիւն էր վարժարա, նիս հանդիսին։

‘Յետ այս ամեն հանդիսից Նախագահն Արհիապատիւ Արբահսյր Ռւխտիս խօսեցաւ առ աշակերտս յորդոր քաջալերիչ, գովելով անոնց արիաբար ըրած ջանքն և ուսումներն, և յառաւելագոյնն իրախուսելով, որ օր մը ըլլան պիտանի անձինք, նեցուկ ընտանեաց, պարծանկք և օգուտ հայ ազգին՝ հոգւոյ, մոտաց և սրտի ճշմարիտ և կատարեալ գաստիարակութեամբ։

Հուսկ ուրեմն բերուեցան պատանեաց ակնկալեալ մրցանակներն, զորս Ար. հիապատիւ Նախագահն և աղնուաշուք կուսակալն և հիւպատն Օսմաննեան թարձրագոյն Դրան և այլք ’ի հրաւիրելոցն կարգաւ բաշխեցին իւրաքանչիւրին։ Ումանք նաև արտաքին վարժապետաց վկայագրով պսակուեցան, և ծափահար գովութեամբ պատուեցան ’ի բազմականէն։ Աւելորդ համարեցանք առանձին յանուանէ յիշատակել զարիագոյնս ’ի պատանեաց, բաւական սեպելով որ իւրաքանչիւրին վարկը և արժէքն արդէն նշանակեալ յառանձին ցուցակս՝ դրկուած են առ իւրաքանչիւր ծնողս, որոնք տեսնեն յայտնի իրենց զաւակաց ըրած ջանքը և յառաջաղիմութիւնն։

